Республика Армения ООО
«НАХАГЦЕРИ
ПОРДЗАКННУТЮН»

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Republic of Armenia
«NAKHAGTSERI
PORDZAQNNUTYUN» LLC

Հայաստանի Հանրապետություն

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N 6-13/25-2

09.07.2025 թ.

Լիցենզիա ՔՊL-001139

Լիցենզիա ՔՊL-001434

Նախագծային կազմակերպություն՝ «ՄԻԿՊՐՈ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. Միքայելյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շամախյան 27/1 հասցեի մշակութային կենտրոնի և մեծահասակների ժամանցի սենյակի հիմնանորոգում

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շամախյան 27/1 հասցեի մշակութային կենտրոնի և մեծահասակների ժամանցի սենյակի հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 28831.199 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ Ա.ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Գիրք 2- Ինժեներական մաս

Գիրք 3- Նախահաշիվ

<u>Ճարտարապետաշինարարական մաս</u>

Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շամախյան 27/1 հասցեի մշակութային կենտրոնի և մեծահասակների ժամանցի սենյակի հիմնանորոգման աշխատանքների աշխատանքային նախագիծը կազմվել է Դիլիջանի համայնքապետարանի տեխնիկական առաջադրանքով:

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերե շինարարական նորմերը»,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.03.2014թ N87-Ն հրամանով հաստատված«ՀՀՇՆ 20-06-2014 Շենքերի եւ կառուցվածքների վերակառուցում, վերականգնում եւ ուժեղացում. Հիմնական դրույթներ շինարարական նորմերը»,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ N95-Ն հրամանովհաստատված «ՀՀՇՆ 31-03—2020 «Հասարակական շենքեր եւ շինություններե շինարարական նորմերը»,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.06.2022թ N14-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.03-2022 «Վարչական եւ կենցաղային շենքերի շինարարական նորմերը,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.08.2022թ N21-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերը»,

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թN253-Ն հրամանովհաստատված «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի եւ շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համարե շինարարական նորմերը»,

- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ N128-Ն հրամանը»,

- ՀՀ կառավարության 19.03.2015թ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների եւ այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու եւ ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշումը:

Նախագծի համար ելակետային տվյալներ են հանդիսանում Դիլիջանի համայնքապետարանի տեխնիկական առաջադրանքը:

Շենքի մակերեսը կազմում է 476,29 քմ:

Շենքը թեք տեղանքի հարթեցված տեղամասում կառուցված, հատակագծում ուղանկյունաձև ուրվագծով 7*29.2մ եզրաչափերով, հարկերում 3.3մ բարձրությամբ,

(հարկի բարձրությունը դիտվել է՝ հատակից միջհարկային ծածկի սալերի ստորին նիշը), մեկ հարկանի հասարակական գործառնական նշանակության առանձին կառույց է:

Աշխատանքային նախագծով նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

Քանդման աշխատանքներ.

Իրականացնել ջրատար ձագարի, ջրատար խողովակների քանդում:

Արտաքին բարեկարգման ժամանակ պատերի հին երեսասվաղի քանդում, հին սալվածքի քանդում:

Նոր սալվածքի համար բնահողի փորում:

Շենքի առանձին սենքերում միջնորմերի, դռների, պատուհանների ապամոնտաժում, պատեր սվաղի քանդում, առաստաղների երեսասվաղի քանդում:

Կառուցման աշխատանքներ.

Հարթ տանիքի նոր շերտի կառուցում ապահովելով ջրահեռացման ուղությունները, կատարել ջրամեկուսացման և ջրահեռացման աշխատանքներ:

Ջրթափ խողովակները, ձագարները, ծունկերը, պետք է լինեն ցինկապատ պրոֆիլավոր թիթեղներից, իսկ HL68H.0 պարապետային ձագարը գործարանային:

Շենքի ներսում նոր հատակագծի իրականացում:

- Սենյակներում, միջանցքներում, սանհանգույցներում, աստիճաններում հատակների, պատերի և առաստաղի վերանորոգում, հարդարում:

- Հիմնովին փոխարինել նորերով դռները, պատուհանները, հատակները, որոնք նշված են նախագծում, քանի որ, բացի նրանից, որ դրանք ունեն վնասվածքներ և դրանց զգալի մասի տեխնիկական վիճակը վթարային է:

- Մետաղապլաստե պատուհաններում միջատապաշտպան ցանցերի տեղադրում, ներքին պատուհանագոգերի տեղադրում, հերմետիկացում, արտաքին դռների տեղադրում՝ ալյումինե պրոֆիլով ջերմախզիչ միջուկով, (ըստ նորմերի՝ համապատասխան լայնությամբ):

- Բակի բարեկարգում, սալապատում՝ բացառելով մթնոլորտային տեղումների և մակերևութային ջրերի ներթափանցումը շենքի կոնստրուկտիվ տարրեր և հիմնատակ, թեքահարթակի կառուցում համապատասխան նորմերին:

- Շինարարության ժամանակ ապամոնտաժված բոլոր պիտանի էլեմենտները հանձնել պատվիրատուին

- Առաջացած շինարարական աղբի բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում:

Ինժեներական մաս

Գտնվող օբյեկտի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծը մշակվել է համաձայն ներկայացված առաջադրանքի, ճարտարապետա շինարարական գծագրերի, ՀՀՇ Ն 40 - 01.01 - 2014 գործող շինարարական նորմերի և կանոնների:

Ջրամատակարարում և կոյուղի մասի նախագծում նախատեսված են հետևյալ համակարգերը.

ա. Խմելու տնտեսական ջրամատակարարում

բ. Կենցաղային կեղտաջրերի կոյուղի

Օբյեկտի ջրամիացումն իրականացվում է տարածքի լոկալ ջրագծից՝ գոյություն ունեցող մուտքագծի տեղով:

Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է:

Սառը ջրամատակարարման և սպառման խողովակաշարերը ընտրվել են պոլիպրոպիլենե խողովակներից: Տաք ջրամատակարարման սնուցումն խոհանոցի սպառիչներին իրականացվում է էլեկտրաջրատաքացուցիչի օգնությամբ:

Համակարգը նախատեսված է սանտեխնիկական սարքերից տնտեսակենցաղային կեղտաջրերի հեռացման համար:

Համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել D50, D110, կոյուղու պոլիվինիլքլորիդե (PVC) T խողովակներից:

Կոյուղու հորիզոնական և կանգնակների միացումները կատարվում են թեք ձևավոր մասերով:

Նախահաշիվ

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման : Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները՝

- Հիմնական աշխատավարձ	2.42527
- Մեքենաների շահագործում	3.00227

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 05.2025 թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝

- Նյութերի տեղափոխման ծախսեր	1,132
- Այլ նյութեր	1,05

- Պահեստավորման ծախսեր	1,02
Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել	262536 դրամ
Նախահաշվում հաշվարկված է նաև՝	
- Վերադիր ծախսեր	13,3%
- Շահույթ	11%
- Ա.Ա.Հ	20%

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան: Առաջարկվել է հատակագծերի, տանիքի հատակագծի վրա շենքի չափերը բացակայում են, քանդվող սալվածքի չափերը բացակայում են, բարեկարգվող բակի հատակագծում չափադրումները թերի են, թեքահարթակի բազրիքի 6-րդ դիրքում Φ38 խողովակի երկարությունը ավել է հաշված, սալվածքի եռաչափ հանգույցներում, հանգույց-1-ում շերտերի անվանումները բարեկարգման հատակների մասնագրի հետ չեն համապատասխանում, նախահաշվում կիրառված են սխալ գործակիցներ: Նշված դիտողությունները շտկվել են:
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Նախագծերի փորձաքննություն»** ՍՊԸ-ի փորձաքննությունը <u>ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է</u>, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և <u>ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ է ՀԱՍՏԱՏՄԱՆ:</u>

Փորձագետներ՝ Լ. Հարությունյան

Ս. Թադևոսյան